

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

No 11 - Լ

« 03 » օգոստոսի 2022

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ
ՓՈՐՁԱՐԿՈՂ
2-3-ՐԴ, 5-8-ՐԴ ԵՎ 10-11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2022-2023 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող 2-3-րդ, 5-8-րդ և 10-11-րդ դասարանների 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանը՝ համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը՝
 - 1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առարկայական

չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող դասարանների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով Հավելվածով հաստատված ուսումնական պլանը:

2) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մնացած դասարանների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 20-ի N 54-Ն հրամանով հաստատված հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները (փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.10.2021թ., N 79-Ն հրաման):

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:


ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

8/3/2022

X 

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211



Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարի

2022 թվականի օգոստոսի 3-ի N 11-L հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ
ՓՈՐՁԱՐԿՈՂ 2-3-ՐԴ, 5-8-ՐԴ ԵՎ 10-11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Ընդհանրական պարզաբանումներ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող 2-3-րդ, 5-8-րդ և 10-11-րդ դասարանների (այսուհետ՝ Փորձարկող դասարաններ) 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանը (այսուհետ՝ Ուսումնական պլան) ունի երեք՝ պետական, դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչ:
2. Օրինակելի ուսումնական պլանը ներառում է ուսումնական բնագավառները, յուրաքանչյուր բնագավառին հատկացված նվազագույն և առավելագույն շաբաթական ժամաքանակները, ըստ դասարանների պետական պարտադիր առարկայացանկը, պետական, դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչները (Ձև 1):
3. Ուսումնական պլանի պետական բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանվում են տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում ընդգրկված առարկաներին հատկացված նվազագույն ժամաքանակները և երաշխավորված առարկայացանկը (Աղյուսակ 1):
4. Ուսումնական պլանի պետական բաղադրիչի առարկաները ուսումնասիրվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված Հիմնական և Նպատակային ծրագրերով:

5. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է սովորողների ընտրությամբ, Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան Հաստատության սահմանած առարկաներին, Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորված առարկաներին, Հաստատության կողմից ներդրվող նոր առարկաներին, որոնց ծրագրերը հաստատվել են Նախարարության կողմից, ինչպես նաև կարող է հատկացվել պետական բաղադրիչով սահմանված առարկաներին:
6. Փորձարկվող դասարաններում Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամերը, որպես ուսումնական խմբակների հատկացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված «Առողջ ապրելակերպ» դասընթացին, 10-11-րդ դասարանում՝ «Մասնագիտական կողմնորոշման ակումբներ» ծրագրին, 10-11-րդ դասարանում՝ ռազմամարզական ճամբարներում՝ ՆՁՊ-ի ուսուցմանը, ինչպես նաև ուսումնական նախագծերին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 05-Լ (18.02.2022թ.) հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգի» համաձայն:
7. Փորձարկող դասարաններում սովորողների շաբաթական ծանրաբեռնվածությունը սահմանում է Հաստատությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված սանիտարական կանոնները և նորմերը:
8. Ուսումնական պլանի պետական, դպրոցական և անհատական բաղադրիչները պետական Հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են:
9. Հաստատությունը Ուսումնական պլանի պետական, դպրոցական և անհատական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը(ները):
10. Հաստատության 10-11-րդ դասարաններում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես նաև կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված առարկայական ծրագիր ունեցող այլ լեզու:

11. Հաստատության 10-11-րդ դասարաններում ուսուցումն իրականացվում է Հիմնական և Նպատակային առարկայական ծրագրերով: Հաստատությունում ձևավորվում են ուսումնական առարկան հիմնական և նպատակային ծրագրերով ուսումնասիրող ուսումնական խմբեր:
12. Հաստատության միջնակարգ դպրոցի 10-11-րդ դասարանների և առանձին գործող ավագ դպրոցի 10-11-րդ դասարանների սովորողը առարկան կարող է ուսումնասիրել տվյալ ուսումնական առարկայի Հիմնական կամ Նպատակային առարկայական ծրագրով և Հաստատության կողմից ընդգրկվում է այդ ծրագիրը ուսումնասիրող խմբերում:
13. Այն դեպքում, երբ սովորողը պետական բաղադրիչով տրված առարկան ուսումնասիրում է Նպատակային ծրագրով, նույն առարկան Հիմնական ծրագրով չի ուսումնասիրում:
14. Այն սովորողները, որոնք Հաստատության 10-12-րդ դասարաններում ուսումնասիրում են «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» (այսուհետ՝ «ԲՏԾՄ») ուսումնական բնագավառի առարկաները Նպատակային ծրագրերով, 10-11-րդ դասարաններում «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառից ուսումնասիրում են «Հասարակագիտություն» ինտեգրված ուսումնական առարկան:
15. Այն սովորողները, որոնք Հաստատության 10-12-րդ դասարաններում առարկայական ծրագիրն ուսումնասիրում են Նպատակային ծրագրով հայագիտական, հասարակագիտական առարկաներ և (կամ) օտար լեզուներ, 10-11-րդ դասարաններում «ԲՏԾՄ» ուսումնական բնագավառից ուսումնասիրում են «Բնագիտություն» ինտեգրված ուսումնական առարկան:
16. Հաստատության՝ առարկայական չափորոշիչների և ծրագրերի փորձարկման մեջ չընդգրկված դասարաններում ուսումնական աշխատանքներն ամբողջությամբ իրականացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 20-ի N 54-Ն հրամանով հաստատված (փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.10.2021թ., N 79-Ն հրաման) հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների պահանջներին համապատասխան:

Հաստատության փորձարկող դասարանների ուսումնական պլանի պարզաբանումներ

17. Հաստատության 2-3-րդ դասարաններում պետական բաղադրիչը կազմված է օրինակելի ուսումնական պլանով սահմանված ուսումնական առարկաներից:

18. Հաստատության 2-3-րդ դասարաններում առարկայացանկի ձևավորման սկզբունքներն են՝

1) մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով, ինչպես նաև մաթեմատիկական մտածողությունը, քննադատական մտածողությունը, կանխատեսումներ կատարելու ունակությունները շախմատ խաղի ուսուցման միջոցով զարգացնող առանձին առարկայով (օրինակ՝ «Մաթեմատիկա», «Շախմատ» առարկաներ),

2) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից և ծրագրերից օգտվելու կարողություններ ձևավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկա),

3) տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Տեխնոլոգիա» առարկա),

4) «ԲՏԾՄ» բնագավառի բնագիտական բովանդակությունը, «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն», «Հայրենագիտություն» և «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները ներկայացվում են մարդուն և նրա շրջակա աշխարհն ուսումնասիրող մեկ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկա),

5) «Օտար լեզուներ» բնագավառը 2-րդ դասարանում ներկայացվում է միայն «Ռուսաց լեզու» առարկայով, իսկ 3-րդ դասարանում երկու օտար լեզվով, որից մեկը «Ռուսաց լեզուն» է,

6) «Հայոց լեզու և գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն և գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Մայրենի» առարկա),

7) «Արվեստ և արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին և ինտեգրված առարկաներով (օրինակ՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ, «Արվեստ» ինտեգրված առարկա),

8) «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով (օրինակ՝ «Ֆիզկուլտուրա» առարկա):

19. Հաստատության 5-6-րդ դասարաններում առարկայացանկի ձևավորման սկզբունքներն են՝

1) ԲՏՃՄ բնագավառը՝

ա) բնագիտությունը ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Բնություն» առարկա),

բ) մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Մաթեմատիկա»),

գ) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից և ծրագրերից օգտվելու կարողություններ ձևավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկա),

դ) տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Տեխնոլոգիա» առարկա)։

2) «Օտար լեզուներ» բնագավառը, բացի ռուսերենից, ներկայացվում է առնվազն ևս մեկ օտար լեզվով։

3) «Հայոց լեզու և գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն և գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Մայրենի» առարկա)։

4) «Հայրենագիտություն» և «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները ներկայացվում են Հայաստանի և հայ ժողովրդի և համաշխարհային պատմությունը, մշակույթը և կրոնը, աշխարհագրությունը, հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ 5-րդ դասարանում «Իմ հայրենիքը», իսկ 6-րդ դասարանում՝ «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկաներ)։

5) «Արվեստ և արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին և ինտեգրված առարկաներով (օրինակ՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ, «Արվեստ» ինտեգրված առարկա)։

6) «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով (օրինակ՝ «Ֆիզկուլտուրա» առարկա)։

20. Հաստատության 7-8-րդ դասարաններում առարկայացանկի ձևավորման սկզբունքներն են՝

1) ԲՏՃՄ բնագավառը՝

ա) բնագիտությունը ներկայացվում է առանձին բնագիտական առարկաներով (օրինակ՝ «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Զիմիա», «Կենսաբանություն» առարկաներ)։

բ) մաթեմատիկական ներկայացվում է առանձին մաթեմատիկական առարկաներով («Հանրահաշիվ», Երկրաչափություն» առարկաներ)։

գ) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է կիրառական ծրագրերի ուսումնասիրության միջոցով կյանքի պահանջներին և ապագա կրթությանը, աշխատանքային գործունեությանը բավարարող համակարգչային անհրաժեշտ հմտություններ զարգացնող առանձին ուսումնական առարկայով (օրինակ՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկա)։

2) «Օտար լեզուներ» բնագավառը, բացի ռուսերենից, ներկայացվում է առնվազն ևս մեկ օտար լեզվով։

3) «Հայոց լեզու և գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն և գրականությունը ուսումնասիրող առանձին առարկաներով (օրինակ՝ «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաներ)։

4) «Հայրենագիտություն» բնագավառը ներկայացվում է առանձին՝ «Հայոց պատմություն» առարկայով։

5) «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառն ընդգրկում է համաշխարհային պատմությունը և հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող առանձին առարկաներ («Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» առարկաներ)։

6) «Արվեստ և արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին և ինտեգրված առարկաներով (օրինակ՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Արվեստ» ինտեգրված առարկա)։

7) «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով (օրինակ՝ «Ֆիզկուլտուրա» առարկա):

21.10-11-րդ դասարաններում ուսումնական պլանի պետական բաղադրիչը ուղղված է պետական պարտադիր առարկաների Հիմնական և Նպատակային ծրագրերով ուսուցման կազմակերպմանը:

22.10-11-րդ դասարաններում դասավանդվում է «Բնագիտություն» և (կամ) «Հասարակագիտություն» ուսումնական առարկաները:

23. Միջնակարգ դպրոցի ավագ դասարանը և առանձին գործող ավագ դպրոցի դասարանը տվյալ ուսումնական առարկան նույն ծրագրով ուսումնասիրող սովորողներից կազմված ուսումնական խումբ է:

24. Միջնակարգ դպրոցի ավագ դասարանների և առանձին գործող ավագ դպրոցի դասարանների ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչը հատկացվում է պետական բաղադրիչով կամ սովորողի կողմից ընտրված, Հաստատության կողմից սահմանված առարկաներին:

25.10-11-րդ դասարաններում ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչը հատկացվում է ուսումնական խմբակներին և նախագծերին:

26. 7-8-րդ և 10-11-րդ դասարաններում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից:

27. Ուսումնական առարկան Հիմնական կամ Նպատակային ծրագրերով ուսումնասիրել ցանկացող սովորողներից ձևավորվում են առանձին ուսումնական խմբեր: 10-11-րդ դասարաններում ուսումնական խմբում սովորողների թիվը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի» պահանջներին համապատասխան:

28. Այն դեպքում, երբ 10-11-րդ դասարանում ուսումնական պլանի պետական բաղադրիչի ուսումնական առարկայի ծրագրերով սահմանված Հիմնական կամ Նպատակային ծրագրեր ընտրած սովորողներից ձևավորված խմբի թվաքանակը չի գերազանցում «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգով» սահմանված սովորողների թվաքանակը, կարող է կազմվել մեկ ուսումնական խումբ երկհամակազմ դասարանի ձևավորման սկզբունքով, որն ուսումնասիրում է նույն առարկան տարբեր ժամաքանակներով:

29. Տարրական դպրոցի 2-3-րդ դասարաններում «Ռուսաց լեզու», 3-րդ դասարանում՝ «Օտար լեզու», միջին դպրոցի 5-8-րդ և ավագ դպրոցի 10-11-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:
30. Հաստատության ուսումնական պարապմունքները սկսելու, ավարտելու, ուսումնական պարապմունքների ընթացքում տրվող արձակուրդների ժամկետները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 54-Ն հրամանի Հավելվածի գլուխ 1-ի, իսկ Հաստատության Փորձարկող դասարաններից բացի մյուս դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է գլուխ 2-ի պահանջներին համապատասխան:

[illegible]

[1] S- տարրական, Հ- հիմնական, Մ- միջին

**Հաստատության առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող
դասարանների**

ուսումնական պլանի նմուշ

Պետական պարտադիր առարկայացանկ	Դասարաններ, ուսումնական առարկաների պարտադիր նվազագույն ժամաքանակներ							
	II	III	V	VI	VII	VIII	X	XI
Մայրենի	7	7	6	6	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	3	3	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	3	3
Իմ հայրենիքը	-	-	2	-	-	-	-	-
Իմ հայրենիքն ու աշխարհը	-	-	-	2	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	3	3	3	3
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	2	2	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	1	1	2	2
Ռուսաց լեզու	3	2	2	2	2	2	-	-
Օտար լեզու	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	5	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	3	3	2	2
Երկրաչափություն	-	-	-	-	2	2	1	1
Ես և շրջակա աշխարհը	1	1	-	-	-	-	-	-
Բնություն	-	-	2	2	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	-	-	2	2
Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն	1	1	1	1	1	1	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	2	2	-	-
Ֆիզիկա	-	-	-	-	2	2	-	-
Քիմիա	-	-	-	-	2	2	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	2	2	-	-

Տեխնոլոգիա	1	1	2	2	-	-	-	-
Կերպարվեստ	1	1	1	1	0,5	0,5	-	-
Արվեստ	-	-	-	-	-	-	-	-
Երաժշտություն	1	1	1	1	0,5	0,5	-	-
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2
Շախմատ	1	1	-	-	-	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	1	1	1
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	3	2	2	13	13
Ընդամենը	22	24	28	29	34	35	33	33
Անհատական բաղադրիչ (ընտրովի)	5		6				12	